

## Կուտակվող ժամկետային ավանդ

### Լրացուցիչ տեղեկատվություն

ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿՈՒՄ ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից՝ հատուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես՝



| Ավանդի արժույթային կառուցվածքը        | Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ | Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ | Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ |  |
|---------------------------------------|--|--|---|--|
|                                       |  |  | Եթե դրամային ավանդը 2 միլիոն դրամից ավել է                | Եթե դրամային ավանդը 2 միլիոն դրամից պակաս է  |
| Ավանդի երաշխավորման առավելագույն չափը | 4 միլիոն ՀՀ դրամ                             | 2 միլիոն ՀՀ դրամ                                   | 4 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)  | 2 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ երկու միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով) |

- Հաշվի սպասարկումն (անկախ հաշիվների քանակից և գործարքների իրականացումից) անվճար է:
- Ավանդային պայմանագրի գործողության ավարտից հետո ընթացիկ հաշվի պահպանման սակագները սահմանվում են «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ» ՓԲԸ կողմից իրականացվող գործառնությունների սակագներին համապատասխան:
- Ավանդային պայմանագրի գործողության ավարտից հետո ընթացիկ հաշվի փակման դեպքում հետագայում ավանդ ներդնելու նպատակով դրա վերաբացումն անվճար է:
- Ավանդային հաշվում ավանդատուի անունով կարող են մուտքագրվել նաև երրորդ անձանց դրամական միջոցները՝ նրա ավանդի հաշվի մասին անհրաժեշտ տվյալների նշումով:
- Տոկոսագումարը հաշվարկվում է օրական՝ հաշվին առկա մնացորդի նկատմամբ:
- Բանկն ավանդի գումարի վրա տոկոսագումարները հավելագրում է ավանդը Բանկ մուտք լինելու հաջորդ օրվանից մինչև այն հաճախորդին վերադարձնելու կամ ավանդատուի ավանդային հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:
- Արտարժույթով ներդրված ավանդների դիմաց հաշվարկված տոկոսագումարները վճարվում են ՀՀ դրամով՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակած տվյալ օրվա միջին փոխարժեքով:
- Հաճախորդի հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույթի հիման վրա: Իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանար հաճախորդը, եթե իր ավանդի դիմաց ստացված տոկոսագումարները վերաներդնելու ավանդի տեսքով:
- Բանկն իրավունք ունի փոփոխելու ցպահանջ ավանդների և բանկային հաշվում եղած դրամական միջոցների համար վճարվող տոկոսների չափը, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

- Դրամային ավանդը նախատեսված ժամկետից շուտ պահանջելու դեպքում 1 բանկային օրվա ընթացքում ավանդատուին կվճարվի ավանդի գումարը և մինչև ավանդի դադարեցման օրվան նախորդող օրերի համար չվճարված տոկոսագումարները՝ տարեկան 1% չափով:
- Արտարժույթային ավանդը նախատեսված ժամկետից շուտ պահանջելու դեպքում 1 բանկային օրվա ընթացքում ավանդատուին կվճարվի ավանդի գումարը և մինչև ավանդի դադարեցման օրվան նախորդող օրերի համար չվճարված տոկոսագումարները՝ տարեկան 0.1% չափով:
- Ավանդատուի ցանկությամբ ավանդի պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո այն կարող է երկարացվել նույն տևողությամբ և տվյալ տարում գործող տոկոսադրույքով՝ առանց Բանկ այցելելու:
- Եթե կնքվել է առանց երկարաձգման հնարավորության պայմանագիր, դրա ժամկետի ավարտից կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները երևան գալուց հետո ժամկետային ավանդի գումարը չպահանջելու դեպքում, գումարը փոխանցվում է ավանդատուի ընթացիկ հաշվին ցպահանջ ավանդի պայմաններով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:
- Ավանդային պայմանագրով որոշված տոկոսագումարների չափը Բանկը չի կարող միակողմանի նվազեցնել, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:
- Տվյալ ավանդային հաշվի համար Բանկի կողմից նախատեսված կամ սահմանված չեն տարեկան տոկոսային եկամտաբերությունը նվազեցնող սակագներ կամ այլ պայմաններ:
- Ավանդային պայմանագրի գործողության ընթացքում ստացված տոկոսագումարները համաձայն ՀՀ գործող օրենսդրության ենթակա են հարկման 10%-ի չափով:
- Հաճախորդին հաշվի քաղվածքի (այս թվում՝ կրկնօրինակի) տրամադրում - անվճար
- Փաստաթղթերի կրկնօրինակը տրամադրվում է՝
  - մինչև 3 ամիս վաղեմության դեպքում՝ 1,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ը),
  - 3 - 12 ամիս վաղեմության դեպքում՝ 2,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ը),
  - 1- 3 տարի վաղեմության դեպքում՝ 5,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ը),
  - 3 տարուց ավել վաղեմության դեպքում՝ 10,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ը):
- Տեղեկանքները տրամադրվում են՝
  - աուդիտորական հարցման պատասխան՝ 5,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ը),
  - այլ տեղեկանքներ՝ 3,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ը):
- Բանկ ներդրված ավանդի վերաբերյալ տեղեկատվությունը բանկային գաղտնիք է, և ԱԿԲԱ-ԿՐԵՂԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿԸ երաշխավորում է դրա գաղտնիությունը:
- Ավանդային պայմանագրից ծագած տարածայնությունները և վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու պարագայում ծագած տարածայնություններն ու վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: